ՎՐԱՑ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ա. Կ.

Վրաց-աբխազական հակամարտությունը կրում է հստակ էթնիկ բնույթ և սկիզբ է առնում խորհրդային ժամանակաշրջանից[1]: 1921 թ. մարտին ստեղծվեց Աբխազիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը (ԱԽՍՀ), որը նույն տարվա մայիսին ճանաչվեց Վրաստանի հեղափոխական կոմիտեի կողմից[2]: 1921 թ. դեկտեմբերի 16-ին Վրաստանի և Աբխազիայի միջև կնքվեց հատուկ դաշնային պայմանագիր, որով Աբխազիան իր ինքնիշխան լիազորությունների մի մասը զիջեց Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը (ՎԽՍՀ)՝ ստանալով պայմանագրային հանրապետության կարգավիճակ վերջինիս կազմում: Այդ պայմանագիրը նաև իրավական հիմք դարձավ կողմերի միջև ռազմական, քաղաքական և ֆինանսատնտեսական համագործակցության ձևավորման համար[3]: 1922 թ. դեկտեմբերի 13-ին Վրաստանը և Աբխազիան միասին մտան Անդրկովկասի Խորհրդային Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության (ԱԽՍՖՀ) կազմի մեջ, իսկ արդեն 1922 թ. դեկտեմբերի 30-ին վերջինիս կազմում Աբխազիան միացավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությանը (ԽՍՀՄ)[4]:

Իրավական տեսանկյունից հատկանշական է 1925 թ. ապրիլի 1-ին ընդունված ԱԽՍՀ սահմանադրությունը, որը Աբխազիան ամրագրում է որպես անկախ այլ ուժերից, իր տարածքում պետական իշխանություն իրականացնող ինքնիշխան պետություն: Միաժամանակ սահմանադրությունը նշում է, որ Աբխազիայի ինքնիշխանությունը կարող է սահմանափակվել միայն ԱԽՍՖՀ և ԽՍՀՄ սահմանադրություններով[5]:

Աբխազիան պահպանեց իր՝ պայմանագրային հանրապետության կարգավիճակը մինչ 1931 թ., երբ մտավ ՎԽՍՀ կազմի մեջ՝ որպես սովորական ինքնավար հանրապետություն (Աբխազիայի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն): Հարկ է նշել, որ վրացական կողմը,

---

[1] **Dov Lynch.** *Why Georgia Matters, Chaillot Paper n°86, Institute for Security Studies, European Union, Paris, February 2006, p. 18.*

[2] *Declaration of the Revolutionary Committee of the Soviet Socialist Republic of Georgia on Independence of the Soviet Socialist Republic of Abkhazia, 21 May 1921 (Jemal Gamakharia, Badri Gogia, Abkhazia -Historical Region of Georgia, Tbilisi, 1997, p. 473, in Russian).*

[3] *Union Treaty between the SSR of Georgia and the SSR of Abkhazia, 16 December 1921 (Struggle for Strengthening the Soviet Power in Georgia, 1959, pp. 177-178, in Russian).*

[4] **Tim Potier.** *Conflict in Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia: A Legal Appraisal, Kluwer Law International, 2001, p. 9.*

[5] *Constitution of the Soviet Socialist Republic of Abkhazia, 1 April 1925, Article 5 (Congresses of the Soviets of the USSR, Union and Aautonomous Soviet Socialist Republics of the Transcaucas, Collection of Documents of 1923-1937, 1964, v. VI, pp. 686-700, in Russian).*

հակառակ աբխազների պնդումների, ժխտում է, որ Աբխազիայի կարգավիճակի փոփոխությունն իրականացվել է ճնշման ներքո[6]:

1936 թ. դեկտեմբերի 5-ին ընդունված ԽՍՀՄ սահմանադրությունն ամրագրեց, որ իր կազմի մեջ մտնող ՎԽՍՀ-ի մաս են կազմում Աբխազիայի և Աջարիայի Ինքնավար Հանրապետությունները, ինչպես նաև Հարավային Օսիայի ինքնավար մարզը[7]: Ըստ այդմ, Աբխազիան արդեն Վրաստանի կազմում ուղղակիորեն մտավ ԽՍՀՄ-ի մեջ: 1937 թ. փետրվարի 13-ին ընդունված ՎԽՍՀ սահմանադրությունը իրավական հիմք դարձավ Աբխազիայի նոր սահմանադրությունն ընդունելու համար[8]: Նույն տարվա օգոստոսի 2-ին ընդունված՝ Աբխազիայի սահմանադրությունը[9] վերահաստատեց ինքնավար հանրապետության կարգավիճակը ՎԽՍՀ-ի կազմում[10]:

Մինչ 1989 թ. իրավիճակը մնաց գրեթե անփոփոխ՝ չնայած Աբխազիայի կարգավիճակի փոփոխմանն ուղղված աբխազական մտավորականության բազմաթիվ ջանքերին: Շրջադարձային նշանակություն ունեցավ 1989 թ. մարտի 18-ին Աբխազիայի Լիխնի գյուղում կայացած՝ աբխազ ժողովրդի ներկայացուցիչների հավաքի ընդունած որոշումը, որը նախատեսում էր վերականգնել մինչ 1931 թ. Աբխազիայի ունեցած կարգավիճակը[11]: Հաջորդ քայլը 1990 թ. օգոստոսի 25-ին ԱԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից պետական ինքնիշխանության մասին հռչակագրի ընդունումն էր[12]:

Այսպիսով, իրավական տեսանկյունից ուսումնասիրելով վրաց-աբխազական հակամարտության նախապատմությունը, անվերապահորեն կարող ենք փաստել, որ գործ ունենք էթնոքաղաքական հակամարտություն հետ: Անցած դարի սկզբից սկսված աշխարհաքաղաքական զարգացումները

---

[6] Спорные границы на Кавказе, под редакцией Бруно Коппитерса, М., 1996, с. 41.

[7] Конституция (Основной закон) Союза Советских Социалистических Республик. Утверждена Чрезвычайным VIII съездом Советов Союза ССР, 5 декабря 1936 года, статья 25 (**Кукушкин Ю. С., Чистяков О. И.** Очерк истории советской конституции, М., 1987, с. 290).

[8] Constitution (Basic Law) of the Soviet Socialist Republic of Georgia, 13 February 1937, Article 24 (Collection of the Constitutional Acts of the Georgian SSR, pp. 133-160).

[9] Կոչվում է նաև «ստալինյան» սահմանադրություն, քանի որ Աբխազիայի նկատմամբ ստալինյան ռեպրեսիաների արդյունք է:

[10] Constitution (Basic Law) of the Autonomous Soviet Socialist Republic of Abkhazia, 2 August 1937, Article 13 (Constitution (Basic Law) of the Autonomous Soviet Socialist Republic of Abkhazia, Sokhumi, 1937, pp. 7-33, in Georgia).

[11] Decision of the Meeting of the Abkhaz People Representatives in the Village of Likhny, 18 March 1989 (Conflicts in Abkhazia and South Ossetia, Documents 1989-2006, collected and commented by M. A. Volkhonski, B. A. Zakharov, N. Y. Silaev, Moscow, 2008, pp. 95-101, in Russian).

[12] Декларация о государственном суверенитете Абхазской Советской Социалистической Республики, 25 августа 1990 (К Союзу суверенных народов, Сборник документов КПСС, законодательных актов, деклараций, обращений и президентских указов, посвященных проблеме национально-государственного суверенитета, М., 1991, с. 246-249).

հանգեցրեցին Աբխազիայի իրավական կարգավիճակի մի շարք փոփոխությունների, որոնք ուղեկցվում էին Աբխազիայի ինքնորոշման փորձերով: Աբխազիայի իրավական կարգավիճակի հիմնախնդիրը հատկանշական է նրանով, որ կարող է ելակետային նշանակություն ունենալ հակամարտության կարգավորման գործում:

Հետագա ներքաղաքական զարգացումները Վրաստանում և Աբխազիայում, ինչպես նաև ԽՍՀՄ-ի փլուզումը ավելի սրեցին ստեղծված իրավիճակը կողմերի միջև: Բացի այդ, վրաց-աբխազական հակամարտության զարգացման վրա ազդեցին մի շարք այլ գործոններ՝ վրաց ազգայնականների որդեգրած ծայրահեղական դիրքը, Գամսախուրդիայի[13] շովինիստական քաղաքականությունը և Աբխազիայի ղեկավարության հույսերը՝ կապված Ռուսաստանի պահպանողական ուժերի և Հյուսիսային Կովկասի ինքնավար շարժման հետ: Տվյալ ժամանակահատվածում ռազմական ճանապարհով ստեղծված իրավիճակը լուծելու՝ կողմերի անկարողությունը ստիպեց հարցը տեղափոխել իրավական դաշտ՝ ներգրավելով օրենսդիր մարմիններին[14]:

Իրավական հարթությունում Աբխազիայի և Վրաստանի միջև բանակցությունները շարունակվեցին մինչև 1992 թ. օգոստոսի 14-ը, երբ վրացական զորքերը երկաթուղային ճանապարհի անվտանգության ապահովման պատճառաբանությամբ մտան Աբխազիա: Կողմերի միջև սկսվեցին ռազմական գործողություններ, որոնք ավարտվեցին միայն 1993 թ. սեպտեմբերի 30-ին, երբ աբխազական զինված ուժերը, դուրս մղելով վրացական զորքերին, իրենց վերահսկողության տակ առան ինքնավարության ողջ տարածքը[15]: 1994 թ. մայիսի 14-ին գործադրված բազում ջանքերից հետո, ի վերջո, Մոսկվայում, Ռուսաստանի միջնորդությամբ, Վրաստանի և Աբխազիայի միջև ստորագրվեց հրադադարի և ուժերի տարանջատման մասին համաձայնագիր, ըստ որի, կողմերը պարտավորվում էին պահպանել հրադադարը և զերծ մնալ միմյանց նկատմամբ ցանկացած ռազմական գործողությունից[16]:

1994 թ. նոյեմբերի 26-ին Աբխազիայի Գերագույն խորհուրդը ընդունեց նոր սահմանադրություն, որը հռչակեց Աբխազիայի Հանրապետության անկախությունը: Այն ամրագրեց Աբխազիայի Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան և ժողովրդավարական պետություն, որը պատմականորեն հիմնադրվել է ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի համաձայն և գործելու է օրենքին համապատասխան[17]: 1999 թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցած հանրաքվեում ընդունվեց Աբխազիայի անկախությունը

---

[13] *Զվիադ Գամսախուրդիան նորանկախ Վրաստանի Հանրապետության առաջին նախագահն էր (1991-1992 թթ.):*

[14] *Спорные границы на Кавказе, под редакцией Бруно Коппитерса, с. 46.*

[15] **Tim Potier.** *Conflict in Nagorno-Karabakh, Abkhazia and South Ossetia: A Legal Appraisal, Kluwer Law International, 2001, p. 12.*

[16] *Соглашение о прекращении огня и разъединении сил, подписанное в Москве 14.V.1994.*

[17] *Constitution of the Republic of Abkhazia, 26 November 1994, Article 1.*

հաստատող մեկ այլ իրավական հիմք՝ Աբխազիայի Հանրապետության ազգային անկախության մասին ակտը[18]: Չնայած այս ամենին՝ տվյալ ժամանակահատվածում Աբխազիան մնում էր չճանաչված և դե ֆակտո անկախ պետություն՝ միջազգայնորեն ճանաչվելով որպես Վրաստանի մաս: Անհրաժեշտ է նաև նշել, որ համաձայն Վրաստանի սահմանադրության, Աբխազիան մինչ օրս Վրաստանի անբաժան մասն է[19]:

Վրաստանի և Աբխազիայի միջև հրադադարը երկար չտևեց. 1998 թ. Աբխազիայի Գալիի շրջանի էթնիկ վրացիներն ապստամբեցին ընդդեմ Աբխազիայի կառավարության, որը հանգեցրեց վեցօրյա պատերազմի (մայիսի 20-ից 26-ը): Պատերազմն ավարտվեց Գագրայում հրադադարի կնքմամբ, որի համաձայն, կողմերը պետք է դուրս բերերին իրենց զինված ուժերը Գալիի շրջանից[20]: Այս ամենի հետևանքով աբխազական ուժերին հաջողվեց իրենց վերահսկողության տակ վերցնել գրեթե ողջ Գալիի շրջանը: 2001 թ. Կոդորի կիրճի շուրջ ստեղծված ճգնաժամային իրավիճակը կրկին սրեց վրրաց-աբխազական հակամարտությունը՝ հանգեցնելով ռազմական գործողությունների: Սակայն նախաձեռնված հակաաբխազական գործողությունները պսակվեցին անհաջողությամբ, և Աբխազիան կարողացավ լիովին վերականգնել վերահսկողությունը Կոդորի կիրճում: Իրավիճակը փոխվեց 2006 թ. աշնանը, երբ վրացական զինված ուժերը գրավեցին Կոդորի կիրճը՝ այն վերանվանելով Վերին Աբխազիա: Վերջինս մինչ 2008 թ. օգոստոսը Աբխազիայի միակ տարածքն էր, որը վերահսկվում էր Վրաստանի կենտրոնական իշխանությունների կողմից: Սակայն 2008 թ. օգոստոսին տեղի ունեցած հնգօրյա պատերազմում ռուսական և աբխազական զինված ուժերին հաջողվեց վրացական զորքերը դուրս մղել Կոդորի կիրճից՝ վերականգնելով իրենց հսկողությունը դրա նկատմամբ: Ըստ այդմ, աբխազական զորքերը վերահսկողություն հաստատեցին Աբխազիայի ողջ տարածքում: Դեպքերի նման զարգացումը հանգեցրեց մի քանի պետությունների կողմից Աբխազիայի անկախության ճանաչմանը: Աբխազիայի անկախությունը առաջինը ճանաչեց Ռուսաստանը (26.VIII.2008)[21], որին հաջորդեցին Նիկարագուան (5.IX.2008)[22], Վենեսուելան (10.IX.2009)[23], Նաուրուն (15.XII.2009)[24], Վանուատուն (23.V.-

[18] Act on the National Independence of the Republic of Abkhazia, 12 October 1999.

[19] Constitution of Georgia, Adopted on 24 August 1995 (Last Amendment 27.12.06), Article 1.

[20] Protocol on cease-fire, Separation of Armed Formations and Guarantees on Inadmissibility of Forcible Activities, Gagra, 25 May 1998 (Collection of Documents Relating to the Issue of Conflict Settlement in Abkhazia, Georgia adopted in 1992-1999, p. 107, in Russian).

[21] Decree of the President of the Russian Federation on Recognition of the Republic of Abkhazia, Moscow, Kremlin, 26 August 2008.

[22] El Presidente de la República Nicaragua, Decreto N 47-2008, 5 September 2008.

[23] Agreement on the Establishment of Diplomatic Relations between the Republic of Abkhazia and the Bolivarian Republic of Venezuela, Caracas, 23 July 2010.

[24] Agreement on the Establishment of Diplomatic Relations between the Republic of Abkhazia and the Republic of Nauru, Sukhumi, 15 December 2009.

2011)[25] և Թուվալուն (18.IX.2011)[26]: Անհրաժեշտ է նաև նշել, որ Աբխազիան, Հարավային Օսիան, Լեռնային Ղարաբաղը և Մերձդնեստրը ճանաչում են միմյանց անկախությունը՝ սերտ համագործակցելով Չճանաչված պետությունների միության շրջանակում:

Նշված պետություններից բացի, մյուս բոլոր պետությունները և միջազգային կազմակերպությունները ճանաչում են Աբխազիան՝ որպես Վրաստանի անբաժան մաս՝ նշելով, որ Աբխազիայի անկախության ճանաչումը կդառնա վտանգավոր նախադեպ՝ սպառնալով տարածաշրջանային խաղաղությանը և կայունությանը: Այսուհանդերձ, սահմանելով Աբխազիայի ներկայիս միջազգային իրավական կարգավիճակը, կարող ենք նշել, որ այն դե ֆակտո անկախ և մասամբ ճանաչված պետություն է, որն ինքնուրույն վերահսկում է իր ամբողջ տարածքը: Մասամբ ճանաչված լինելու հանգամանքը բացատրվում է նրանով, որ Աբխազիան, չլինելով ՄԱԿ-ի անդամ, ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ մի քանի պետությունների կողմից: Հետևաբար, միջազգային հարաբերություններում Աբխազիայի մասնակցությունը սահմանափակված է այդ պետությունների շրջանակով: Հարկ է նշել նաև, որ չնայած Աբխազիայի դե ֆակտո անկախությանը և Վրաստանի կենտրոնական իշխանության կողմից չվերահսկվելուն, այնուամենայնիվ, այն դե յուրե ինքնավար հանրապետություն է Վրաստանի կազմում:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ վրաց-աբխազական հակամարտության իրավական ասպեկտների ուսումնասիրությունը թույլ է տալիս այն դիտարկել տարածաշրջանում առկա մյուս հակամարտություններից զատ: Միաժամանակ, երևան եկած իրավական հիմքերը հնարավորություն են տալիս անհատականացնել հակամարտության բնույթը և ցուցաբերել տարբերակված մոտեցում վերջինիս հանդեպ: Այս ամենը կրկին կարևորում է վրաց-աբխազական հակամարտության իրավական տեսանկյունների առանցքային նշանակությունը հակամարտության արդյունավետ կարգավորման գործում:

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ГРУЗИНО–АБХАЗСКОГО КОНФЛИКТА

АЙРАПЕТЯН А. К.

Резюме

Грузино-абхазский конфликт носит выраженный этнический характер. Он возник в советский период. В марте 1921 года была образована Советская Социалистическая Республика Абхазия, которая в мае того же года была признана Революционным комитетом Грузии. В декабре 1921 года между Грузией и Абхазией был подписан специальный союзный договор, по которому

[25] *Agreement on the Establishment of Diplomatic Relations between the Republic of Abkhazia and the Republic of Vanuatu, Sukhumi, 27 May 2011.*

[26] *Joint Statement on Establishment of Diplomatic Relations between the Republic of Abkhazia and Tuvalu, Sukhumi, 18 September 2011.*

Абхазия часть своих суверенных прав уступала Советской Социалистической Республике Грузия, получив в составе последней статус договорной республики. Этот договор стал правовой основой военно-политического и финансово-экономического сотрудничества между сторонами. В декабре 1922 года Грузия и Абхазия вместе вошли в состав Советской Социалистической Федеративной Республики Закавказья, а впоследствии в составе последней Абхазия вошла в Союз Советских Социалистических Республик.

THE LEGAL ASPECTS OF THE GEORGIAN–ABKHAZIAN CONFLICT

A. HAYRAPETYAN

Abstract

The Georgian-Abkhazian conflict is ethnic by its nature and started in the Soviet period. In March 1921, the Soviet Socialist Republic of Abkhazia was formed and in May of the same year, it was recognised by the Revolutionary Committee of Georgia. In December 1921, Georgia and Abkhazia signed a special treaty, where Abkhazia passed part of its sovereign rights to the Soviet Socialist Republic of Georgia and was granted the status of a treaty republic. This agreement also became a legal basis for the military-political, economic and financial cooperation between the parties. In December 1922, Georgia and Abkhazia together entered the Soviet Socialist Federal Republic of Trans-caucasia, after which Abkhazia joined the Union of the Soviet Socialist Re- publics.